



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

03 դեկտեմբերի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 54-Ա/Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի 2-րդ մասի 9)-րդ կետը, հոդված 9-ի 3-րդ մասի 16)-րդ կետը, ինչպես նաև՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ Օրենքի հոդված 12-ը, հոդված 25-ի 1-ին մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի սույն հրամանի հավելվածով հաստատված ցանկում ներառված հրամաններում կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) «գիտության պետական կոմիտե» բառերը փոխարինել «գիտության կոմիտե» բառերով՝ իրենց համապատասխան հոլովածներով,
- 2) «աշխատակազմի ղեկավար» բառերը փոխարինել «գլխավոր քարտուղար» բառերով՝ իրենց համապատասխան հոլովածներով:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ցանկ

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի
նախագահի հրամանների

հհ	Անվանումը	Ընդունման ամսաթիվը	Համարը
1.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը սահմանելու մասին	«04» նոյեմբերի, 2008 թ.	19-Ա/Ք
2.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեում լրագրողների հավատարմագրման կարգը սահմանելու մասին	«01» դեկտեմբերի, 2008 թ.	22-Ա/Ք
3.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ) և պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման գիտական թեմաների և ծրագրերի հայտերի ու հաշվետվությունների ձևերը հաստատելու մասին	«29» հոկտեմբերի, 2010թ.	38-Ա/Ք
4.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին	«24» հունվարի, 2011 թ.	03-Ա/Ք
5.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին	«25» հունվարի, 2011 թ.	04-Ա/Ք
6.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային- ծրագրային ֆինանսավորման պետական ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին	«13» հունվարի, 2012 թ.	01-Ա/Ք
7.	Համաձայնագրի ձևը հաստատելու մասին	«19» հունիսի, 2013 թ.	16-Ա/Ք

8.	«Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ծախսային ծրագրի ֆինանսական միջոցներով սարքավորման ձեռքբերման հանձնարարության պայմանագրի ձևը հաստատելու մասին	«26» օգոստոսի, 2013 թ.	31-Ա/Ք
9.	ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի նոյեմբերի 28-ի N 35- Ա/Ք հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին	«19» հունվարի, 2015թ.	01-Ա/Ք
10.	Գիտաշխատողներին գիտական գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգն ու գիտաշխատողներին գիտական գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման հանձնարարության պայմանագրի ձևը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2013 թ. մարտի 13-ի N 07-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին	«26» հունիսի, 2015 թ.	16-Ա/Ք
11.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարզների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27 – Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին	«24» հունիսի, 2016 թ.	29-Ա
12.	Գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգերը հաստատելու և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի մայիսի 18-ի N 13-Ա/Ք և 2012 թվականի մայիսի 24-ի N 14- Ա/Ք հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին	«14» հոկտեմբերի, 2016 թ.	51-Ա
13.	Գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրերի ձևերը հաստատելու մասին	«24» հոկտեմբերի, 2016 թ.	57-Ա
14.	Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցության համար ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագրի ձևը հաստատելու մասին	«27» հունվարի, 2017 թ.	06-Ա
15.	Գիտական կենտրոնի զարգացման և կարողությունների վերականգնման համար ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագրի ձևը հաստատելու մասին	«20» մարտի, 2017 թ.	11-Ա

16.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի հայտի օրինակելի ձևը հաստատելու մասին	«06» ապրիլի, 2017 թ.	17-Ա
17.	Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրի նպատակային-ծրագրային ֆինանսավորման հայտի ձևը հաստատելու մասին	«04» մայիսի, 2017 թ.	23-Ա
18.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ- ՌԴ ԻԱՀ - 2017» հայ - ռուսական կիրառական հետազոտությունների մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների (նախագծերի) իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին	«27» փետրվարի, 2018 թ.	07-Ա/Ք